

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Պարագաղաբացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“)

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄԵԼԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուժ գիմները,—ն երբին տեսուէթիւնը Մի
հրաւէր: Նամակ երևանից: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր:—Արտաքին տեսուէթիւնը:
Յունաստան: Նամակ Թիւրքիայից:—Վշապի հե-
նազդիւններ:—Յայտարարութիւններ: Բանասիրա-
կան Աշխարհիկ լեզուի մասին:

ՈՒՍ ԴԻՄԵՆԲ

Լրագրական թղթակցութիւն-
ներով և մասնաւոր նամակներով
Վանից օգնութիւն են խնդրում
այնտեղի սովատանչների համար:
Կովկասի հայեր, ի՞նչ պէտք է
պատասխանենք: Եթէ լուենք,—
դուք մեզ կը դատապարտէք, ե-
թէ ձեր կողմից բաց ասենք,—ձեզ
կը վերաւորենք, եթէ խոստանանք,
—սուտ կասենք... Ուրեմն ի՞նչ
անենք:

Կովկասն էլ հացի է կարօտում,
բայց փանցին դրան չէ նայում: Նա
մեզ անիծում է մեր սառնու-
թեան համար: Ելլաւստանի բա-
ղերում մի շարք զուր թափա-
ռելով, նա արմատներից էլ չէ
կշտանում: Նա թուլանում է, նա
վայր է ընկնում, բայց շունչը ար-

ձակելիս, դարձեալ նա մեղանից է
օգնութիւն սպասում:

Ի՞նչ անենք կովկասեցի հայեր...
Լուենք, ձեռք չը մեկնենք վան-
ցուն. բայց ի՞նչ իրաւունքով, երբ
նա ասում է. «Ես սովից մեռնում
եմ, բայց իմ կեանքը քո կեանքից
թանգ է. ես մեռնում եմ այն-
տեղ, ուր մեռել են մեր նախ-
նիքները, ես մեռնում եմ այն հո-
ղի վրա, որի սիրոյ համար ինն
դար շարունակ փշեայ պսակ եմ
կրել, իմ գերեզմանն է այնտեղ,
ուր ուղղված են հինգ միլիոն աչ-
քեր... իսկ դու...»

Ի՞նչ անենք... լուենք և նրա
թուրք կուլ տանք... Բայց ի՞նչ
աչքով միմեանց երեսին նայենք:

Ո՛հ, լուել չենք կարող. գուցէ և
մեզ նոյնպէս անհնարին է և օգ-
նել... Ելլա՛, ի՞նչ անենք, ո՛ւժ
դիմենք:

Դիմենք նախ այն մարդուն,
որի վրա է դարձնում սովամահ
հայը իր յետին հայեացքը, դիմենք
նրան, որի աղօթքին է հաւա-
տում յուսահատ ազգը իր մեղքը
քաւելու և ապագան գտնելու

համար, դիմենք նրան, որի դէմքին
է կրօն, խօսքն է փրկու-
թիւն: Թող փրկէ նա մեր յու-
սոյ կենտրոնը, ազգի բունը, Վա-
նը: Թող փրկէ նա ոչ սեփական
զրպանով, ոչ էլ սաղմոսով, այլ
մի հատ կենդանի խօս-
քով:

Եւ այդ խօսքը սուրբ Գրիգորի
տաճարից արձագանք կը գտնէ
հազարաւոր եկեղեցիներում, որոնք
սփռված են հեռու հիւսիսից մին-
չև Եւրոսասդէմ:

Եւ այդպէս կը փրկվի Վանը,
երբ նրան ձեռք կը մեկնի Ս.
Լյւմիածինը, երբ նրան ձեռք կը
մեկնի մեծ քահանայապետը...

Իսկ եթէ Լյւմիածինը իր մի
խօսքն էլ խնայեց, դիմենք այն
ժամանակ մեր սրտին և նրա-
նից դուրս պահանջենք:

Բայց եթէ մեր սիրտն էլ լուց,
—թող այն ժամանակ մեր բե-
րանը այլ ևս չամաչէ ասել. «Թը-
քենք հայի անունին»:

Գր. Նիկողոսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՀՐԱՒԻՐ

Մարդ, երբ մի հայացք է ձգում տաճկա-
հայոց վիճակի վրա, իսկոյն հազար սոսկում
ու սարափ է զգում: Արդեօք այն արարած-
ները մի՞թէ տանջանքի և չարարանքի կա-
մուք են ստեղծվել որ, ինչ և իցէ տառա-
պանք և անարգանք հէնց նրանց վերայով
անցկոնայ: Բաւական չէ այն հազար ու մէկ
զոյն ներգլխիւնները որ ծանրաբեռնված կը-
րում էին հլու հեղութեամբ,—յանկարծ
գուրս հանեց զուլը անտանկի պատիժ
սովը՝ անելով զոհեր:

Եւ երաւ անհնար նրա ժանիքներին
դիմադրել ոչ հոմերոսութիւնով և ոչ
ոյժով: Հիմայ եթէ շուտով չը փշրվի
ժանիքը,—կրելու է հայրենիքը: Այլ ևս չէ
մնացել սահման համբերելու, զարկել է ժա-
մը գործելու (օգնելու): Թող ընդհանուր ազ-
գայինը, մանաւանդ հարուստ և փարթամ
Թիֆլիսիցը, խաւար աչքով և սառ սրտով չը
նային այս աշխարհակեր տեսարանին: Բաւ է
որչափ զեղխութեան զուարթակներով շուրջու-
թեան պատարագներով են զուարթացնում
մարմինները: Թող տան իրանց՝ մի կարծ մի-
ջոց հետեւի հոգեկուրթութեան: Զէ երկար
կեանքն սովի, ոչ աւել հինգ ամիսից: Թողնեն
զոհակ հինգ ամիսով զուարթութիւնը, կը-
լուրի, թատրոնի և այլ ունայն նպատակներով
վատնած գումարները՝ նուիրեն սովալուկ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ ՄԱՍԻՆ

II

Մի միտք, որը վերին աստիճանի վնասակար է,
այդ այն է, որ մեր գրական լեզուն իսկապէս աշ-
խարհիկ չի նկատու համար իբր թէ հարկաւոր է նո-
րա բոլոր բառերը և վերջապէս թիւնները և թէ
դարձուածները «աշխարհաբանացնել», եթէ ինչ
կը թոյլատրվի այսպիսի մի վայրենի բայ գործա-
ծել: Եւ այդ ձգտումը երևում է շատերի մօտ ոչ
թէ միայն գրաբանի վերաբերեալ, այլ մինչև
անգամ աշխարհաբանի մէջ գոյութիւն ունեցող
այս և այն ձև ու եղանակի դէմ: Աշխարհաբա-
նիկ և tout prix: Պիտի խոստովանվել, որ այդ-
պիսիների նպատակը ամենաբարձրն է որ կայ աշ-
խարհում. դորանով նոքա ցանկանում են հնչուա-
նիկ լեզուի ամբողջութիւնը: Ել ինչ երկար մտածենք,
մտածում են նոքա, քամի, սեռական քամու, ու-
րեմն եկեղեցի—եկեղեցու, ձի—ձիւ, և կամ եկե-
ղեցի—եկեղեցիների, ինչու չէ ձի—ձիւներ, և կամ
խօսել—խօսեց, ուրեմն բերել—բերեց, տանել—
տարեց, ասել—ասաց: Այնպէս որ բառական է մի
հայ, լինի նա դիցուք հայկաբան, նստէ իր սենեա-
կում և մի շարքով աչք մէջ, դերձակի պէս, բոլոր
միւս բայերն էլ մի կամ երկու-երեք օրինակներով
վրա կտրտէ և այդպիսով կը ստանանք լեզուի մի-
ութիւն, Միութիւն չը ստացանք, այլ միակերպո-
ւթիւն, ձանձրալի միակերպութիւն... Մասնաւոր
Թիւրքի է տեսնել նոյն շաղկի վրա մի վիպասան,

որը իր նիւթերը ազգային կեանքից քաղելով, պի
տի մտածէինք որ նաև լեզուի կողմից նա ներշնչ
չված կը լինի նոյն ազգային հոգով: Ահա ինչպէս
է գրում մեր ակնաւոր վիպասաններից մէկը.
«Նոքա կերպն, խմեցին, երեցին և ուրիշ շատ
գոթութիւններ արեցին»: Հայաստանի այդ ո՞ր
անկիւնումն և ո՞ր գրականագէտ կրթված հաս-
րակութեան մէջ է լսել «անեց» բայի արեցին ան-
ճոռնի անցեալը, այդ ես չը դիտեմ. միայն թէ իմ
ենթադրութիւնն է, որ գրողը ցանկալով միութիւն
հաստատել, խմեցին, երեցին բայերից յետ պատ-
ճառ չէ տեսել, թէ ինչու չը պիտի ասել նաև ա-
րեցին: Երանի քերականներին. բոլոր գրողները նո-
րա համար են մտածում, էլ ինչ հարկաւորութիւն
կայ նորա կողմից լեզուի կանոնները ուսումնա-
սիրելու...

Չանձբալի միակերպութիւնը նախադասում է
ազգային հանճարի բաղմբերանգ պատճառներից և
դորան անուանում լեզուի ամբողջութիւնը...

Մի այլ ձգտում, այդ՝ գրաբանից վերցրած մի
քանի դարձուածների դէմ նկատելի հակակրօ-
ւթիւնն է: Խոստովանենք պարզ ի պարզօր գրիչը
նոր ձեռքն առած գրողը մեր աշխարհիկ լեզուի
մէջ անցած գրաբան. դարձուածների և կամ բա-
ռերի դէմ է միշտ, որքան սովորական և մի և
նոյն ժամանակ գեղեցիկ լինեն նոքա: Բայց նմա-
նապէս անհրաժեշտ է, որ քանի նա աւելի վարժ-
վում է, այդքան նա հաշտվում է իր վաղվայ ա-
ստանի հետ: Ընդունած այդ որպէս իրողութիւն,
հարցնում ենք զորա պատճառը: Պատճառը պարզ
է, որպէս արեգակ. քանի նա մեծանում է, գաղա-
փարների հորիզոնը ընդարձակվում, ճաշակը նորա-
նում, նորքան նա զգում է այն պակասութիւնը,
որը կայ բուն աշխարհաբանի մէջ իր գաղափար-
ները աւելի ճիշդ արտայայտելու համար: Բացի
դրանից, նա չէ հասկանում թէ ինչու ի գուր տեղից
մի աղամանդ պատուհանից փողոցը պիտի վայր
ձգէ, որովհետեւ դա նորան հօրին է ժառանգած:
Ով փոքր ինչ ճաշակաւոր մարդ է, նա իսկոյն կա-

րող է դրահատի գրաբան մի քանի խօսքերի և
դարձուածների թէ ներքին ոյժը և թէ արտաքին
փայլը: Մենք չը պիտի գործածենք նմանք, ձե-
մելիք, դու գնաքե՛ս, համապիւր, հանապազի զուր,
ըստ երևոյթին և հազար ուրիշ այդպիսի թէ հար-
կաւոր, թէ գեղեցիկ և թէ ներդաշնակ բառեր,
որովհետեւ նոքա գրաբանիցն են մեզ մօտ անցել:
Այդ երեքսայութիւն է շատերի կողմից այնպէս, որ-
պէս միամտութիւն նոքա կողմից, որոնք, «Արա-
րատի» լեզուին հետեւելով, մտածում են հայկական
կրօնը և ազգը պաշտպանել:

Մի կէտում, մասնաւոր գրողը կանչված է մեծ
դեր խաղալ լեզուի մէջ. այդ նորա ստեղծողական
դերն է, որով են բառեր և դարձուածների է ըս-
տեղծում ու կամ եղածը գեղեցկացնում: Ով մեծ
գրողների գրուածները է կարդացել, նա նկատած
կը լինի ի հարկէ, թէ ինչպէս մէկը, որը իր անձի
մէջ մարմնացրել է ազգային հոգին, նա դառնում
է, կարծես, նոյն իսկ ազգը ինքը սորա ամբողջ հա-
նաքից ոյժով: Եւ արդարև այդպիսի հեղինակի
ստեղծած թէ բառերը և թէ դարձուածները, թէ-
պէտ բոլորովին նոր, դու չը լսած, ամեն ըն-
թեցողին թվում են հարազատ և դուք կը տես-
նէք նոյն նորութիւնը բոլորի շրթնաքերի վրա
անզգով կերպով գործածվելու: Այդպիսի գրողին
կանուանեն՝ ազգային մարդ, ազգային վիպասան,
ազգային բանաստեղծ: Այդ հանգամանքի վրա թե-
թիւ չը նայէք. դա մի բաղադրեալ երևոյթ է, որի
մեկնելը փոքր ինչ խորհել է պահանջում: Եւ ար-
քանչիւր բառը, կազմելով լեզուի մի մասը, կրում
է իր մէջ նաև նոյն լեզուի ազգային տարբերը:
Բաւական չէ որ դուք մի բառ ստեղծէք, որը
դիցուք մտքի և քերական ձևերին համեմատ ճիշդ
է. կարծես ազգային հոգին միայն քերական ձևերի
մէջ լինի: Մի բառ ազգայնացնելու համար հար-
կաւոր է բացի դրանից նաև այն ձևը տալ նորան,
որի հետ ազգային ճաշակը հաշտվել կարողանայ:
Բառի երկարութիւնը, հնչումը, ներդաշնակութիւ-
նը, միւս բառերի հետ կապվելու ընդունակու-

թիւնը և այլն, այդ բոլորի մէջ ազգային ճաշակը
պահանջում է մի յայտնի ուղղութիւն: Մի պա-
րոն, մի յայտնի աստիճանի բանաստեղծ անգամ,
իր վէպի մէջ գործ է ածում նուրբ ճաշակը և
ականջը վերաւորող, կարելի է ասել, մի անհամ
բառ. նա ստեղծում է մի բառ, որը պիտի նշա-
նակէ «небеса» և ինչ անուն է տալիս նորան...
«նշանատախտակ»: Ուղիղ տախտակայ մի բառ,
որը ասեղնագործի բոլոր արհեստական կանոննե-
րով փայտից չիմած մի անդուկ է նմանում...

Ինչպէս և ստեղծողական հանճար չէ պահան-
ջում օտար բառեր գործածելը, բայց բոլոր բառե-
րին պատկանեալ ընդհանուր պայման—ազգային
ընաւորութիւնը—այստեղ ևս իր իրաւունքը պիտի
տարածէ: Այժմ մասնաւոր յաճախ գրում են
Փորմա, պղտիկա, ասնիկապիս և այլն օտար
բառեր: Ընդունենք օտար բառեր, բայց Աստուծոյ,
խաթիւն, վերջինք այնպիսի ճիւղեր, որոնք ծառի
հետ պատուաւորվել կարողանան և կամ գունչ հե-
ռացնենք խոշորոտները: Ընթերցողներից շատերը
գուցէ կ'օրոպայի մեծ քաղաքներում չիմացկե-
րտեսած լինեն, օտարոտի հազուադէպով, երկար,
համարեա մինչև գետին կախված քաղաւ ծամերով:
Բոլորեքեանք, գործերը թողած, դեռ նոքա վրա
ապած նայում են, իսկ շատերը նաև ծիծաղում:
Մեր խնդը հայ թէ վրացի սաղանդարները Զիւլա-
րեֆիա գնալու ժամանակ այդ արգէն փորձից
դիտեն, փոխենք նոքա բնիկ հազուատները, եւրօ-
պացիք նոքա—նոքա թաթոն անգամ կերթա-
յին առանց օտարի ուշադրութիւնը իրանց վրա դը-
րաւելու:

Նոյնը և մեզ օտար, եւրօպական հիւր բառերի
հետ է պատահում: Հազար ասացէք Փորմա, ոչ
մի հայ, իբրև հայ, բառի այդ ձևը գործ չի ածի
խոսակցութեան մէջ, եթէ նա չէ ուղղում իր հն-
կնդիրների ժպիտը շարժել, ինչինքն է այդ, միթէ
հայը այդ բառի օտարութեան վրա է ծիծաղում.
ամենին. ինչպէս Փրանսիային կամ գերմանացի
չին ծիծաղի չիմացող վրա, որովհետեւ նա չիմացի